

## **Լրացուցիչ տեղեկություններ**

### **Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի 2008թ. կոռուպցիայի ընկալման համաթիվը**

#### **Ընդհանուր տվյալներ**

##### **Ի՞նչ է իրենից ներկայացնում Կոռուպցիայի ընկալման համաթիվը:**

Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի (ԹԻ) կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) դասակարգում է երկրները՝ ելնելով նրանից, թե տվյալ երկրի պետական ծառայողների եւ քաղաքական գործիչների շրջանում գոյություն ունեցող կոռուպցիայի ինչպիսի մակարդակ է ընկալվում հարցվողների կողմից: Այն բաղադրյալ համաթիվ է, այլ կերպ ասած, հարցումների հարցում է, որը ստացվում է տարբեր, անկախ եւ իրենց բնագավառներում ճանաչում ունեցող հաստատությունների կողմից գործարարների եւ փորձագետների շրջանում անցկացված հարցումների կոռուպցիային առնչվող տվյալներից: ԿԸՀ-ն արտացոլում է աշխարհում առկա կարծիքները, ներառյալ նաեւ այն փորձագետներին, ովքեր բնակվում են գնահատվող երկրներում: ԹԻ-ը լիազորել է ԿԸՀ հաշվարկումը կատարել Գերմանիայի Պասսաուի համալսարանի Տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր, ԹԻ-ի գիտական գծով ավագ խորհրդական Յոհան Գրաֆ Լամբուրգին:

##### **ԿԸՀ տեսանկյունից ինչպե՞ս է սահմանվում կոռուպցիան:**

ԹԻ-ի ԿԸՀ-ն իր ուշադրությունը կենտրոնացնում է հանրային ոլորտում տիրող կոռուպցիային եւ կոռուպցիան սահմանվում է որպես անձնական օգուտ ստանալու նպատակով պետական պաշտոնի չարաշահում: ԿԸՀ հաշվարկելու համար օգտագործվող հարցումներում տրվում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են անձնական օգուտ ստանալու նպատակով պաշտոնեական դիրքի չարաշահմանը, ինչպիսիք են, օրինակ, պետական պաշտոնյաների կաշառումը, պետական գնումների գործընթացների ժամանակ պայմանագրի գումարից «կիսվելը», պետական միջոցների յուրացումը կամ էլ հարցեր, որոնց միջոցով ստուգվում է տվյալ երկրի հակակոռուպցիոն քաղաքականության ազդեցությունն ու արդյունավետությունը եւ դրանով իսկ ընդգրկվում է եւ՝ վարչական, եւ՝ քաղաքական կոռուպցիան:

##### **Ինչո՞ւ է ԿԸՀ հիմնվում միայն ընկալման վրա:**

Փաստական նյութի՝ այն է տրվող կաշառքների չափերի կամ քրեական հետապնդումների կամ էլ դատական գործերի քանակների համեմատության հիման վրա դժվար է գնահատել տարբեր երկրներում կոռուպցիայի ընդհանուր մակարդակը: Օրինակ քրեական հետապնդումների կամ դատական գործերի վրա հիմնված համեմատական տվյալները չեն արտացոլում կոռուպցիայի իրական մակարդակը, այլ միայն արտացոլում են տվյալ երկրի դատախազական կամ դատական մարմինների աշխատանքի որակը եւ/կամ տվյալ երկրի զանգվածային լրատվամիջոցներում կոռուպցիոն դրսեւորումների լուսաբանման արդյունավետությունը: Հետեւաբար, տվյալների՝ ըստ երկրների, հավաքագրման արդյունավետ մեթոդ է հանդիսանում յուրաքանչյուր երկրում կոռուպցիոն իրականության հետ առավել ուղղակիորեն շփվող անձանց փորձի եւ ընկալումների վրա հիմնվելը:

## **Մեթոդաբանություն**

**Քանի՞ երկիր է ընդգրկված 2008թ. ԿԸՀ դասակարգման մեջ:**

2008թ. ԿԸՀ դասակարգման մեջ ընդգրկված է 180 երկիր, այնքան, որքան 2007-ին:

**Ի՞նչ սկզբունքով են երկրները ընտրվում ԿԸՀ դասակարգման մեջ ներառվելու համար:**

Համաձայն ԹԻ պահանջի, տվյալ երկիրը կամ տարածքը ԿԸՀ դասակարգման մեջ ներառելու համար անհրաժեշտ է, որ այդ երկիրն ընդգրկված լինի կոռուպցիայի հետ կապված տվյալներ պարունակող առնվազն երեք վստահելի հարցումներում: Տվյալ երկրի համաթվում չներառվելը չի նշանակում այդ երկրում կոռուպցիայի բացակայություն, այն ընդամենը նշանակում է համապատասխան տվյալների բացակայություն:

**Ո՞ր երկրները/տարածքներն են հայտնվել ԿԸՀ 2008թ. դասակարգման ցուցակում, եւ որո՞նք այլևս ընդգրկված չեն այնտեղ:**

ԿԸՀ դասակարգման ցուցակում երկրների չնչին փոփոխությունը պայմանավորված է այդ երկրների՝ որոշակի աղբյուրներում ընդգրկված լինելու հանգամանքի ճշգրտմամբ, ինչը հնարավորություն է տվել, որ Պուերտո Ռիկոն ներառվի ԹԻ ԿԸՀ 2008թ. դասակարգման մեջ: Դժբախտաբար միայն երկու աղբյուրից առկա տվյալներ են եղել Գրենադայի պարագայում, որի հետեւանքով այն դուրս է մնացել այս տարվա ԿԸՀ դասակարգումից:

**Ո՞ր երկրները կարող են հայտնվել ԿԸՀ ապագա դասակարգումներում:**

Թրանսփարենսի Ինթերնեշնլը հետեւողական եւ ակտիվ ջանքեր է գործադրում որպեսզի առավելապես մեծ թվով երկրներ եւ տարածքներ ընդգրկվեն ԿԸՀ դասակարգման մեջ: Թեպետ առնվազն երեք վստահելի աղբյուրներից տվյալներ են անհրաժեշտ տվյալ երկիրը ԿԸՀ դասակարգման մեջ ներառվելու համար, հետեւյալ երկրները դիտարկվել են ընդգրկման համար:

Երկու հարցումներից տվյալներ ունեցող երկրներ կամ տարածքներն են Անգոլան, Անտիգուա եւ Բարբուդան, Արուբան, Բահամյան կղզիները, Բերմուդյան կղզիները, Բրունեյը, Կայմանի կղզիները, Ֆիջին, Գրենադան, Լիխտենշտեյնը, Միկրոնեզիան (Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ), Նիդեռլանդական Անտիլները, Յուսիսային Կորեան, Պաղեստինը, Սենթ Կիթս եւ Նեվիսը եւ Տուվալուն: ԿԸՀ դասակարգման մեջ այս երկրների/տարածքների ընդգրկման համար անհրաժեշտ են առնվազն եւս մեկ հարցման տվյալներ:

**Որո՞նք են ԿԸՀ հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների աղբյուրները:**

2008թ. ԿԸՀ հիմնված է 11 անկախ կազմակերպությունների կողմից անցկացված 13 տարբեր հարցումների եւ ուսումնասիրությունների վրա: ԹԻ-ն ջանում է ապահովել իր աղբյուրների բարձր որակը եւ հարցումների անցկացման բացարձակ մաքրությունը: ԿԸՀ հաշվարկման համար օգտագործվող տվյալները պետք է լինեն լավ փաստագրված եւ հնարավորություն տան գնահատելու նրանց հուսալիությունը: Բոլոր աղբյուրներում պետք է ներկայացված լինի ուսումնասիրության մեջ ներառված երկրների դասակարգումը, չափված լինի կոռուպցիայի տարածվածության ընդհանուր աստիճանը: Այս պայմանը բացառում է այնպիսի հարցումների տվյալների օգտագործումը, որոնք կոռուպցիայի հետ մեկտեղ ուսումնասիրում են նաեւ այլ հարցեր, ինչպիսիք են, օրինակ, քաղաքական անկայունությունը, ապակենտրոնացումը կամ ազգայնականությունը:

ԿԸՀ գնահատման համար տվյալները ԹԻ-ին տրվել են անվճար: Որոշ աղբյուրներ թույլ չեն տալիս իրենց կողմից տրամադրված տվյալների հրապարակումը, իսկ մյուսները հրապարակային են

եւ մատչելի: 2008 թ. ԿԸՀ հաշվարկելու համար օգտագործված հարցումների աղբյուրների լրիվ ցուցակի, տրված հարցերի եւ հարցվողների թվի մանրամասների մասին տես ԿԸՀ մեթոդաբանության վերաբերյալ մանրամասն փաստաթուղթը <http://www.transparency.org/cpi> կամ <http://www.ICGG.org> վեբ կայքերը:

**Ո՞ւմ կարծիքն է հարցվում ԿԸՀ հաշվարկման համար օգտագործվող հարցումներում:**

ԿԸՀ արժեքներում արտացոլված տեղեկատվությունը հիմնված է եւ՝ զարգացած արդյունաբերական, եւ՝ զարգացող երկրներում հարցվածների կոռուպցիոն գործելակերպի ըմբռնման վրա: Հարցումներն անցկացվել են գործարարների եւ տվյալ երկրի գծով փորձագետների շրջանում: ԿԸՀ հաշվարկման համար օգտագործված հարցումներում եղել է երկու տեսակի ընտրանք՝ մեկը կազմված միայն տվյալ երկրում բնակվող, իսկ մյուսը՝ այնտեղ մշտապես չբնակվող փորձագետներից: Հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ տվյալ երկրում մշտապես բնակվող եւ չբնակվող փորձագետների տեսակետները զգալիորեն համընկնում են:

**Արդյո՞ք ԿԸՀ վերարտադրում է այն, ինչ ինքը ցույց է տալիս:**

Արդեն առաջին իսկ հրապարակումից, որը եղավ 1995-ին, ԹԻ-ի ԿԸՀ շատ հայտնի դարձավ միջազգային լրատվամիջոցներում: Դա առաջացրեց այն մտավախությունը, որ հարցվողների պատասխաններն իրենց վրա կկրեն ԹԻ-ի մինչ այդ հրապարակված տվյալների ազդեցությունը, որը կարող էր հանգեցնել այսպես կոչված «փակ շրջանով փաստարկման» հիմնախնդրին (հարցվողը ոչ թե իր փորձի կամ ընկալման վրա հիմնված պատասխանն է տալիս, այլ կրկնում է հայտնի հետազոտությունների հետեւությունները): Սույն հիպոթեզը ստուգվեց՝ 2006-ին՝ աշխարհի առաջատար գործարարներին ընդգրկող ուսումնասիրության ժամանակ տալով մեկ հատուկ հարց: Հիմնվելով այդ հարցին տրված ավելի քան 9000 պատասխանների վրա՝ կարելի է ասել, որ ԿԸՀ իմացությունը չի դրդել գործարար փորձագետներին «զնալ հոտի հետեւից»: ԿԸՀ իմացությունը կարող է միայն խթանել հարցվողներին կողմնորոշվելու իրենց սեփական հայացքներում: Սա հստակորեն մատնանշում է այն իրողության վրա, որ ներկայումս կիրառվող մոտեցումը զերծ է «փակ շրջանով փաստարկման» հիմնախնդրից:

**Ինչպե՞ս է ԹԻ-ն վերահսկում ԿԸՀ որակը:**

ԿԸՀ մեթոդաբանությունը ստուգվում է Համաթվի խորհրդատվական հանձնաժողովի կողմից, որը կազմված է կոռուպցիայի, էկոնոմետրիկայի եւ վիճակագրության բնագավառների առաջատար փորձագետներից: Հանձնաժողովի անդամները ներկայացնում են առաջարկություններ ԿԸՀ բարելավելու ուղղությամբ, սակայն միայն ԹԻ ղեկավարությունն է ընդունում օգտագործվող մեթոդաբանության հետ կապված վերջնական որոշումները Պասսաուի համալսարանի դոկտոր պրոֆեսոր Յոհան Գրաֆ Լամբսդորֆի գիտական խորհրդատվության լույսի ներքո:

**ԿԸՀ արժեքների մեկնաբանությունը**

**Ո՞րն է ավելի կարելու՞ ԿԸՀ աղյուսակում երկրի զբաղեցրած տեղը, թե՞ նրա ԿԸՀ արժեքը:**

Երկրի համաթվի արժեքն այդ երկրում առկա կոռուպցիայի ընկալվող մակարդակի շատ ավելի կարելու չափանիշ է: Երկրի դասակարգումը կարող է փոխվել պարզապես միայն այն պատճառով, որ դասակարգման աղյուսակում հայտնվում են նոր երկրներ կամ էլ որոշ երկրներ դուրս են մնում դասակարգումից:

**Արդյո՞ք ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող երկիրը աշխարհի ամենակոռուժյալն է:**

Ոչ: Համաթվի ամենացածր արժեք ունեցող երկիրն այն երկիրն է, որտեղ կոռուպցիայի մակարդակն ընկալվում է որպես ամենաբարձրը դասակարգման ցանկում ընդգրկված երկրների շարքում: Ներկայումս աշխարհում կա ավելի քան 200 ինքնիշխան պետություն, իսկ ԿԸՀ վերջին, 2008թ. դասակարգման մեջ ընդգրկված է նրանցից 180-ը: ԿԸՀ որեւէ տեղեկություն չի տալիս այն երկրների վերաբերյալ, որոնք այդ ցանկում ընդգրկված չեն:

**Օրինակ. ի՞նչ կարելի է եզրակացնել ԿԸՀ 2008թ. դասակարգման աղյուսակում Սոմալիի զբաղեցրած տեղից:**

Կոռուպցիան Սոմալիում ընկալվել է որպես ամենաբարձրը 2008թ. ԿԸՀ դասակարգման ցանկում: Սակայն սա չի նշանակում, որ Սոմալին «աշխարհի ամենակոռուժյալն է»՝ կամ որ սոմալիցիները «աշխարհի ամենակոռուժյալն են»՝ Չնայած նրան, որ կոռուպցիան Սոմալիում հանդիսանում է լավ կառավարմանը, զարգացմանը եւ աղքատության կրճատմանը խոչընդոտող առավել հզոր արգելքներից մեկը, Սոմալիի բնակչության գերակշիռ մեծամասնությունը հանդիսանում է միայն որպես կոռուպցիայի զոհ: Կոռուպցիայի մեջ միայն սահմանափակ թվով ազդեցիկ մարդկանց ներգրավվածությունը եւ երկրի ղեկավարների ու հաստատությունների անկարողությունը վերահսկելու կամ կանխարգելելու կոռուպցիան չեն նշանակում, որ երկիրը կամ նրա ժողովուրդը աշխարհի ամենակոռուժյալն են:

**Կարելի՞ է, արդյոք, տվյալ երկրի 2008 թ. ԿԸՀ արժեքը համեմատել այդ երկրի նախորդ տարիների ԿԸՀ արժեքի հետ:**

Համաթիվը նախեսառաջ տալիս է ընթացիկ կամ նրան նախորդող վերջին մի քանի տարիների ընթացքում գործարարների եւ տվյալ երկրի գծով փորձագետների տեսանկյունների ընդհանուր համապատկերն առանց ուշադրությունը կենտրոնացնելու տարեկան միտումների վրա: Եթե արվում են համեմատություններ նախորդ տարիների հետ, ապա դրանք պետք է հիմնված լինեն տվյալ երկրի համաթվի արժեքի, եւ ոչ թե դասակարգման ցանկում նրա զբաղեցրած տեղի վրա, ինչպես արդեն վերը նշվել էր:

Երկրի համաթվի արժեքի տարեցտարի փոփոխությունները կարող են լինել կամ տվյալ երկրում կոռուպցիայի հետ կապված իրավիճակի ընկալումների կամ էլ ԿԸՀ ընտրանքի կամ մեթոդաբանության փոփոխությունների հետեւանք: Ժամանակի ընթացքում տվյալ երկրի համաթվի արժեքներն իրար հետ համեմատելու միակ հուսալի ձեւն առանձին վերցրած հարցումների տվյալներն ուսումնասիրելն է: Այդ հարցումները կարող են արտացոլել գնահատման մեջ տեղ գտած փոփոխությունները:

**Ինչո՞ւ առանձնապես մեծ փոփոխություն չի գրանցվում տվյալ երկրի ԿԸՀ արժեքում՝ կախված այդ երկրում իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումների հաջողությունից կամ անհաջողությունից, կամ էլ այնտեղ տվյալ ժամանակամիջոցում տեղ գտած կոռուպցիոն սկանդալների բացահայտումից:**

Դժվար է ԿԸՀ համաթվի արժեքը բարելավել կարճ ժամանակի ընթացքում: 2008թ. ԿԸՀ հիմնված է նախորդ երկու տարիների ընթացքում հավաքված տվյալների վրա, որոնք առնչվում են ավելի վաղ ձեւավորված ընկալումների հետ: Սա նշանակում է, որ կոռուպցիայի ընկալման մեջ էական փոփոխությունները հնարավոր է, որ իրենց արտացոլունը գտնեն ավելի երկար ժամանակից հետո:

## **ԿԸՅ 2007 եւ 2008 թթ. արժեքների միջեւ եղած փոփոխությունները**

### **2007թ. համեմատ 2008-ին ո՞ր երկրներում է գրանցվել ԿԸՅ արժեքի առավել մեծ անկում:**

Վերը նշված պատճառներից ելնելով՝ տարեցտարի համեմատություններ կատարելը դառնում է խնդրահարույց: Սակայն, այն չափով, ինչ այդ փոփոխությունները կարելի կլինի կապել առանձին աղբյուրների հետ, կարելի է որոշակի զգուշավորությամբ միտումներ վեր հանել: 2007-ի համեմատ 2008-ին ԿԸՅ նվազման նշանակալի օրինակներն են Բուլղարիան, Բուրունդին, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Իտալիան, Մակաոն, Մալդիվները, Նորվեգիան, Պորտուգալիան, Սոմալին, Տիմոր-Լեստեն եւ Մեծ Բրիտանիան: Այս դեպքերում ընկալման մեջ իրական փոփոխություններ տեղի են ունեցել վերջին երկու տարիների ընթացքում:

### **Նույն ժամանակահատվածում ո՞ր երկրներում է գրանցվել առավել մեծ առաջընթաց:**

Ելնելով նույն նկատառումներից ինչ նախորդ հարցի պատասխանի մեջ էին բերվում եւ հիմնվելով այն աղբյուրների տվյալների վրա, որոնք հետեւողականորեն օգտագործվել են ԿԸՅ արժեքները հաշվարկելիս, 2007-ի նկատմամբ 2008-ին առաջընթաց է գրանցվել Ալբանիայում, Բահրեյնում, Բենինում, Կիպրոսում, Դոմինիկայում, Վրաստանում, Ինդոնեզիայում, Զորդանանում, Մավրիկիում, Նիգերիայում, Օմանում, Լեհաստանում, Կատարում, Սենտ Լուսիայում, Սենտ Վինսենտ եւ Գրենադիններում, Զարավային Կորեայում, Տոնգայում եւ Թուրքիայում:

## **ԿԸՅ կիրառումը**

### **Արդյո՞ք ԿԸՅ-ն հուսալի չափորոշիչ է տվյալ երկրում կոռուպցիայի ընկալվող մակարդակի համար:**

ԿԸՅ-ն կոռուպցիայի ընկալման չափման ծանրակշիռ գործիք է: Որպես այդպիսին այն ստուգվել եւ լայնորեն կիրառվել է գիտնականների եւ վերլուծաբանների կողմից: Սակայն, ԿԸՅ հուսալիության աստիճանը տարբեր է տարբեր երկրների դեպքում: Ավելի վստահելի են այն երկրների ԿԸՅ արժեքները եւ դասակարգման ցուցակում զբաղեցրած տեղերը, որոնց հաշվարկման համար օգտագործվել են մեծ թվով աղբյուրներ եւ այդ աղբյուրների գնահատականների միջեւ տարբերությունները փոքր են (որն արտահայտվում է վստահելիության նեղ տիրույթով): Ճիշտ է նաեւ հակառակ պնդումը:

### **Արդյո՞ք ԿԸՅ-ն հուսալի չափորոշիչ է միջազգային օգնություն հատկացնելուն առնչվող որոշումներ կայացնելիս:**

Որոշ պետությունների կառավարություններ ձգտում են օգտագործել կոռուպցիայի համաթվերի արժեքները՝ որոշելու համար, թե որ երկրները պետք է օգնություն ստանան եւ որոնք՝ ոչ: Թի-Ն չի խրախուսում այդ նպատակներով ԿԸՅ օգտագործումը: Չի կարելի հաշվի չառնել նաեւ այն երկրներին, որոնք ընկալվում են որպես շատ կոռումպացված, քանի որ, ընդհակառակը, դրանք հենց այն երկրներն են, որոնք կարիք ունեն աջակցության՝ դուրս պրծնելու կոռուպցիա-աղքատություն փակուղուց: Եթե երկիրը համարվում է կոռումպացված, ապա դա պետք է դոնորների համար ծառայի որպես ազդանշան, որ ներդրումներն անհրաժեշտ է կատարել կոռուպցիայի դեմ պայքարի համակարգված մոտեցումների մեջ: Եվ եթե դոնորները մտադիր են աջակցել զարգացման ծրագրերի իրականացմանն այն երկրներում, որոնք ընկալվում են որպես կոռումպացված, ապա նրանք պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն «կարմիր դրոշմների» (բացասական միտումների) վրա եւ հանդգնեն, որ առկա են վերահսկողության համապատասխան գործընթացները:

## **Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի ԿԸՀ-ն եւ պայքարը կոռուպցիայի դեմ**

### **Ինչպե՞ս են ֆինանսավորվում ԿԸՀ հաշվարկման աշխատանքները:**

Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ը ֆինանսավորում է ստանում տարբեր պետական գործակալություններից, միջազգային հիմնադրամներից եւ կորպորացիաներից, որոնց ֆինանսական աջակցության շնորհիվ հնարավոր է դառնում ԿԸՀ հաշվարկումը: ԹԻ-ի չափման գործիքների համար լրացուցիչ աջակցություն ցուցաբերո՞ւմ է էռնստ Էնդ Յանգը: Ընդունելով այդ ընկերության ֆինանսական աջակցությունը ԹԻ-ն, այնուամենայնիվ, չի իրականացնում նրա քաղաքականությունը եւ չի ընդգրկում իր որեւէ աջակցողի իր ծրագրերի կառավարման գործընթացներում: Թրանսփարենսի Ինթերնեշնլի ֆինանսավորման աղբյուրների մասին ավելի մանրամասն տես [http://www.transparency.org/support\\_us](http://www.transparency.org/support_us)

### **Ո՞րն է տարբերությունը ԿԸՀ եւ ԹԻ-ի Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) միջև:**

ԿԸՀ գնահատում է տարբեր երկրների հանրային ոլորտներում կոռուպցիայի մակարդակի փորձագիտական ընկալումները, այն դեպքում երբ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (տես [http://www.transparency.org/policy\\_research/surveys\\_indices/gcb](http://www.transparency.org/policy_research/surveys_indices/gcb)) ուշադրության կենտրոնում են լայն հանրության վերաբերմունքը կոռուպցիայի եւ կոռուպցիոն երեւույթների հետ շփման նրանց փորձը:

### **Ո՞րն է տարբերությունը ԿԸՀ եւ ԹԻ-ի Կաշառք տվողների համաթվի (ԿՏՀ) միջև:**

Այն դեպքում երբ ԿԸՀ ցույց է տալիս տարբեր երկրներում կոռուպցիայի մակարդակի ընկալումները, ԿՏՀ-ի ուշադրության կենտրոնում է արտահանող առաջատար երկրների ընկերությունների արտասահմանում կաշառք տալու հակվածությունը, որով այն վեր է ածվում կոռուպցիայի՝ «առաջարկի կողմի» ցուցանիշի: Կաշառք տվողների համաթվի վերջին տվյալները հրապարակվել են 2006թ. հոկտեմբերին եւ դրանք կարելի է գտնել [http://www.transparency.org/policy\\_research/surveys\\_indices/bpi](http://www.transparency.org/policy_research/surveys_indices/bpi) վեբ կայքում: Հաջորդ ԿՏՀ-ի տվյալները կհրապարակվեն 2008-ի վերջին: